2812

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

# ԻՆՉ ԿԱՐԴԱԼ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

խմբագրությամբ
Ա. ԲԱԲԱՅԱՆԻ

016
Ի-61

ՅԵՐԵՎԱՆ 1936

016
Ի-61
19 AUG 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ԻՆՉ ԿԱՐԴԱԼ
# ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Խմբագրությամբ
Ա. ԲԱԲԱՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1935

2812

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библи тека
ՀՍԽՀ ... СР
и ... Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

27544-60

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

Պատվ. 1271. Գլավլիտ 325. Տիրաժ 1000.

Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի կապակցությամբ ՀՍԽՀ Պետական Գրադարանը լույս է ընծայում «Ի՞նչ կարդալ Նոյեմբերյան հեղափոխության մասին» հանձնարարական գրականության այս ցանկը: Ցանկը իր առաջ նպատակ չի դնում տալ Նոյեմբերյան հեղափոխության վերաբերյալ յեղած գրականության սպառիչ մատենագիտությունը: Ցանկի հիմնական նպատակն է գլխավորապես ընդառաջել և ոժանդակել մասսայական ընթերցողին, մասսայական գրադարաններին Նոյեմբերյան հեղափոխության վերաբերյալ գրականությունից օգտվելու, ծանոթանալու Հայաստանի խորհրդայնացման առանձին դրվագների պատմության, ինչպես նաև 15 տարվա ձեռք բերված մեր նվաճումների հետ: Այս տեսակետից նյութի ընտրությունը կատարված է նկատի ունենալով ցանկի այդ նպատակադրումը:

Ցանկում զետեղված ամբողջ նյութը դասավորված է յերեք հիմնական բաժիններում. 1) Հայաստանը դաշնակցական տիրապետության օրոք, 2) Հեղափոխական շարժումները Հայաստանում, Մայիսյան ապստամբություն և Նոյեմբերյան հեղափոխություն և 3) Խորհրդային Հայաստանի նվաճումները: Յուրաքանչյուր բաժնում զետեղված նյութը դասավորված է այբբենական կարգով:

Ցանկը ընդգրկում է թե առանձին գրքերով լույս ընծայված հրատարակությունները և թե պարբերական մամուլի մեջ զե-

տեղված նյութը: Նկարագրությունների մեծ մասին կցված են համապատասխան ծանոթություններ, վորպիսին հնարավորություն է ընձեռնում ցանկից ոգտվողին ավելի մոտիկից ծանոթանալու հրատարակության կամ հոդվածի բովանդակության հետ:

Ցանկի մեջ մտած առանձին հրատարակությունները տարբերելու համար պարբերական մամուլում զետեղված հոդվածներից, վերջինները ցույց են տրված աստղանիշերով:



## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ

1. *ԱԼԱԶԱՆ — Յեռագույնի ու մահի յերկրում: (Ակնարկ-սատիրա): Յե., Պետ. հրատ. 1931. 74 եջ:*

*Գեղարվեստական ակնարկ-սատիրայի ձևով հեղինակը պատմում է իր հիշողությունները և տպավորությունները, թե ինչպես Դաշնակցության տիրապետության որոք Հայաստանի աշխատավորական մասսաները տառապում եյին սովի, կեղտի ճիրաններում ու Թալանչի խմբապետների կրունկի տակ:*

2. *ԱՐԵԼՅԱՆ, Գ. — Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում: (1 հունվ. 1914 թ. — 1 հունվ. 1930 թ.): Յե., Պետհրատ. 1930. 155 եջ:*

* *Նույնը — «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1929. № 7—8, եջ՝ 79—103. № 11—12, եջ՝ 269—321.*

*Վիճակագր. տվյալներ Հայաստանի նախախորհրդային և խորհրդային շրջանների ազգաբնակչության վերաբերյալ: Դաշնակցության որոք կուտակված գաղթականության թիվը: Դաշնակցական տիրապետության շրջանից մնացած գաղթականական բնակչությունը: Խորհրդ. Հայաստանի ազգաբնակչության աճման բարձր տեմպը:*

* 3. *ԱՐԵԼՅԱՆ, Գ. — Կյանքի և մահվան թվեր: «Խորհրդ. Հայաստան» որթ. Յե. 1925. 28 նոյեմբ. № 272.*

*Վիճակագր. տվյալներ Հայաստանի բնակչության աճման վիճակի մասին նախախորհրդային և հետխորհրդային շրջաններում: Դաշնակցական կառավարության շրջանում Հայաստանի բնակչության կատաստրոֆիկ նվազումը՝ շնորհիվ յերկրի տնտեսական քայքայման: Թվական տվյալներ Հայաստանի խորհրդայնացումից հետո բնակչության ռեկորդային աճման մասին:*

* 4. ԲԱԿՈՒՐՑԱՆ, Մ․ — Դաշնակցությունը և բրիտանական հրամանատարությունը։ «Նոր Ուղի» ամսագր․ Ցե․ 1931․ Գիրք 5–րդ, եջ՝ 142—152․

Փաստաթղթեր, վորոնք լուսաբանում են Դաշնակցության և բրիտանական հրամանատարության փոխհարաբերությունը, վորը ցույց է տալիս Հայաստանն անգլիական գաղութ դարձնելու պրոցեսը։

* 5. ԲԱԿՈՒՐՑԱՆ, Մ․ — Դաշնակցությունը և ֆրանսիական հրամանատարությունը։ «Նոր Ուղի» ամսագր․ Ցե․ 1931․ Գիրք 4–րդ, եջ՝ 84—97․

Փաստաթղթեր, վորոնք լուսաբանում են ֆրանսիական հրամանատարության ունեցած դերը Անդրկովկասյան ինտերվենցիայի մեջ։ Ֆրանս․ հրամանատարության և Դաշնակցության փոխհարաբերությունները այդ կապակցությամբ։

6. ԽԱՆՋՅԱՆ, Ա․ — Ավելի զգաստ, ավելի աչալուրջ։ (Ընդդեմ հակախորհրդային ինտերվենցիայի դաշնակցական սպասարկուների)։ Ցե․, Պետհրատ․ 1931․ 27 եջ․

Դաշնակցությունը վորպես իմպերիալիզմի ագենտ Սիրիայում, Իրաքում և Պարսկաստանում։ Դաշնակցության դերը քրդական ապստամբության մեջ։ Իմպերիալիստները պատրաստվում են զինված ինտերվենցիայի։

ԽԱՆՋՅԱՆ, Ա․ — Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը։ — Տես՝ № 31․

* 7. ԿԱՐԻՆՅԱՆ, Ա․ — Նոյեմբերի 29–ը և դեկտեմբերի 2–ը։ (Փաստեր և եջեր անցյալից)։ «Խորհրդ․ Հայաստ․» օրթ․ Ցե․ 1925․ 29 նոյեմբ․ № 272․

Դաշնակցական կառավարության վարած բանակցությունները Թյուրքիայի հետ Հայաստանի խորհրդայնացման նախորյակին և Դաշնակցության ստորագրած կործանիչ դաշնագիրը։

8. ԿԱՐԻՆՅԱՆ, Ա․ — Դաշնակցությունը և իր գինակիցները։ Ցե․, Պետհրատ․ 1932․ 169 եջ։



9. ԿԱՐԻՆՅԱՆ, Ա․ — Ցերկերի ժողովածու։ Հտ․ 1–ին։ Ցե․, Պետ․ հրտ․ 1934․ 450 եջ։

Բ ո վ ա ն դ ա կ․՝ — Հրապարակախոսի հուշատետրից․— Իմպերիալիստական պատերազմ և Հայաստանը․— Դաշնակցությունը փաստերի դեմ․— Հայ ազգայնականների ուղին․— Նացիոնալիզմի «նոր գիրքերը»։

10. ԿՈՐԿՈՏՅԱՆ, Զ․ — Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն։ Ցե․, Պետ․ հրտ․ 1929․ 92, [2] եջ։

Վիճակագր․ տվյալներ դաշնակցական Հայաստանի բնակչության ճերմակ ջարդին (սով, համաճարակ, գաղթ և այլն) տված զոհերի և Խորհրդային Հայաստանի բնակչության ռեկորդային աճման մասին․

11. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՇՈՏ — Համազգային կրիվը։ (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ)։ Ցե․, Պետհրատ․ 1926․ 30 եջ։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՇՈՏ — Նոյեմբերը և մեր անկախությունը։ — Տես՝ № 36․

Ընկ․ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ճառը Հայաստանի խորհուրդների 1–ին համագումարի 1–ին նիստում։ — Տես՝ № 45․

[ՄՈՐՈՒՍ] — Մայիսյան ապստամբության տասնամյակը։ — Տես՝ № 48․

12. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Մ․ — Դաշնակցական դրախտավայրը» կամ սովի և մահվան աշխարհը։ Ցե․, Պետհրատ․ 1932․ 57 եջ։

ՆԵՐՍԻՍՅԱՆ, Մ․ — Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում։ — Տես՝ 52․

13. ԶՈՒԲԱՐ, Ցե․ — Դաշնակցությունը յերրորդ շրջանում։ Ցե․, Պետհրատ․ 1930․ 90 եջ։

14. ԶՈՒԲԱՐՅԱՆ, Գ. Ր. — Դաշնակցության ոճրական որբենոցային և հայրենիքի փրկության կոմիտեն: Յե., Պետհրատ. 1929. 86 էջ:

Դաշնակցության և Թյուրքիայի 1920 թ. դեկտ. 2-ի կնքած կործանիչ դաշնագրի մասին:

* 15. ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Դաշնակցությունը իմպերիալիզմի ագենտ: «Լեն. Ուղի» ամսագր. Յե. 1931. հուլիս—օգոստոս. № 7—8, էջ՝ 106—114.

Փաստաթղթեր, որոնք լուսաբանում են իմպերիալիզմի ու Դաշնակցության փոխհարաբերության խնդիրը:

* 16. Պ[ԱՐՍԱՄՅԱՆ], Վ. — Դաշնակցական հակահեղափոխությունը Հոկտեմբերի դեմ: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 7 նոյեմբ. № 262.

Բաքվի կոմունան դատապարտում է Թիֆլիսի սեյմի վորոշումը՝ Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից անջատելու մասին: Դաշնակցության կապը հարավային Ռուսաստանում բուն դրած սպիտակ գվարդիականների հետ:

17. ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Եջմիածինն ու Դաշնակցությունը: (Հավելված՝ փաստեր, դոկումենտներ): Յե., Պետհրատ. 1931. 40 էջ:

Դաշնակցության և Եջմիածնի փոխհարաբերությունը, Եջմիածինը և հայ կղերը Հայաստանի հեղափոխական շարժումների դեմ:

ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Հաղթական նոյեմբերի ուղին: — Տես՝ № 57.

ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում: — Տես՝ № 58.

18. ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԱՐՇԱԿ — Չեզոք գոտի: Յե., Պետ. հրատ. 1935. 94 էջ:

Գեղարվեստական պատմվածքներ Լոռու «Չեզոք գոտու» մասին:



## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ: ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ:

19. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Խ. — Ղամարլուից—Զանգեզուր: Ժողովածու: (Հիշողություններ Հայաստանի քաղաքացիական կռիվներից): Կազմեց և խմբագր.՝ Խ. Աբրահամյան: Յե., Պետ. հրատ. 1931. 173 էջ:

* 20. ԱՆՈՒՇ — Պայքարի օրերը Ղարսում: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 1 մայիսի, № 100.

Հիշողություններ Ղարսի մայիսյան ապստամբությունից:

* 21. ԱՐԱՔՍ, Մ. — Մայիսը՝ Սուրմալվում: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 1 մայիսի. № 100.

Հիշողություններ Մայիսյան ապստամբությունից:

* 22. ԲԱԿՈՒՐՅԱՆ, Մ. — Պրոլետարական հեղափոխության արխիվից: Փաստաթղթեր Մայիսյան ապստամբության վերաբերյալ: «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1931. Գիրք 2-րդ, էջ՝ 127—134.

23. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՄԵՆԱԿ — Հայկական դիվիզիայի անցյալից: Յե., «ՊԱՔԸ–Ավիաքիմ» ընկ. 1930. 80 էջ:

Պատմական ակնարկ Հայկական դիվիզիայի կազմակերպման և գործունեության վերաբերյալ: Դիվիզիայի վարած հերոսական կռիվները Փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացիայի համար և Զանգեզուրում ապստամբած դաշնակ բանդաների վոչնչացման գործում:

24. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՄԵՆԱԿ — Քաղաքացիական պատերազմը Հայաստանում: 1921 թ. փետր. 15-ից մինչև հուլիսի 13-ը Ղամարլվի, Դարալագյազ — Զանգեզուրի ճակատներում տեղի ունեցած ռազմական գործողությունների ռազմական-քննական վերլուծման մի փորձ: Յե., Պետ. հրատ. 1931. 151 եջ:

Փետրվարյան ավանտյուրայի քաղաքական-զործնական դասերը: Դաշնակցության պրովակացիաները և ռազմական գործողությունների նկարագրության մանրամասնությունները բոլոր ֆրոնտներում:

* 25. ԲԵՐԲԵՐՅԱՆ, Ա. — Ապստամբություն Ղազախ — Շամշադինի լեռներում: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1930. 1 մայիսի. № 100.

Հիշողություններ Ղազախի — Շամշադինի Մայիսյան ապստամբությունից:

* 26. ԲԵՐԲԵՐՅԱՆ, Ա. — Հուշեր Մայիսյան ապստամբությունից: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1935. 12 ապրիլի. № 85.

Դաշնակցական բռնությունները Ղազախի և Շամշադինի շրջաններում: Սև քարի ու շրջանի կոմունիստական շարժումը և Ղազախ — Շամշադինի ապստամբությունը:

* 27. ԴԱԼՈՅԱՆ, Յե. — Մայիսի դեպքերը Բյաֆթարլվի շրջանում: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1930. 1 մայիսի. № 100.

Կոմունիստական բջիջների շրջանում տարած նախապատրաստական աշխատանքները դաշնակցական բռնապետության դեմ ապստամբվելու համար: Հրահանգ ապստամբվելու մասին, դաշնակ սև խմբերը կարողանում են ճնշել սկսվող ապստամբությունը:

28. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Հ. — Սպարապետը Հայաստանում: Յե., Պետհրատ. 1929. 150 եջ:

Նույնը — [2-րդ հրատ.]: Մոսկվա, ԽՍՀՄ ժողկենտր. հրատ. 1931. 112 եջ:



* 29. ԶԱՐԴԱՐՅԱՆ, Հ. — Ապստամբական շարժումները Հայաստանում: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1928. 10 մայիսի. № 108.

* 30. ԽԱՆՋՅԱՆ, Ա. — Հաղթական մայիսի տասնամյակը: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1930. 1 մայիսի. № 100.

31. ԽԱՆՋՅԱՆ, Ա. — Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը: Զեկուցում Մայիսյան ապստամբ. 15-ամյակի առթիվ Լենինականի կուս. և բանվ. ակտիվի ժողովում 1935 թ. ապրիլի 22-ին: Յե., Կուս. հրատ. 1935. 60 եջ:

* Նույնը — «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1935. 28 ապր. № 98.

Դաշնակցական տիրապետության շրջանի Հայաստանի «անկախության» առասպելը: Աշխատավորական մասսաների սարկացումն ու յերկրի ծայրահեղ քայքայումը: Մայիսյան ապստամբությունը իմպերիալիզմի գործակալ դաշնակցական տիրապետության դեմ: Մայիսյան ապստամբության պարտության պատճառները:

32. ԽԱՆՈՅԱՆ, Ս. — Մայիսյան ապստամբությունը: Յե., Պետ. հրատ. 1930. 24 եջ:

Դաշնակ զորքի բարոյական նկարագիրը ապստամբության նախօրյակին: Մայիսմեկյան ցույցերը և այդ ցույցերում տիրապետող կոմունիստական ցույցերը, որի վրա կրակում են դաշնակները: Խմբապետ Սեպուհի դաժանությունը: Քաղաքացիական կռիվները Ալեքպոլում, Ղարսում, Սարըղամիշում և կոմունիստների գնդակահարումը:

* 33. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ, Ն. — Եջեր Մայիսյան ապստամբությունից: «Խորհրդ. Հայաստ.» օրգ. Յե. 1928. 10 մայիսի. № 108.

34. ՀԼԿՅԵՄ պատմություն: Ժողովածու 1-ին: Սպարտակ: 1917—1920. Հուշեր և վավերագրեր: Յե., Կուս. հրատ. 1935. 210 եջ:

Ընկ. Խանջյանի հիշողությունները «Սպարտակ»-ի մասին: Ս. Ղազարյանի, Ա. Մանուչարյանի, Մ. Ցենդլերարյանի, Լ. Արխոյանի,

Արշ. Մելիքյանի և ուրիշների հուշերը: Վավերագրեր և նյութեր «Սպարտակ»-ի գործունեության մասին:

* **35.** ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՇՈՏ — 1920 թ. մայիսի մեկը Հայաստանում: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1925. 1 մայիսի. № 28.

Մայիսմեկյան ցույցերի մասին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՇՈՏ — Համազգային կրիզիսը: (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ): — Տես՝ № 11.

* **36.** ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՇՈՏ — Նոյեմբերը և մեր անկախությունը: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1924. 29 նոյեմբ. № 273.

Դաշնակցական Հայաստանի «անկախությունը» առասպել էր: Նա հենվում էր օտար սվինների վրա և իմպերիալիզմի ծառան էր: Նոյեմբերյան հեղափոխությունը ձեռք բերեց Հայաստանի իրական անկախությունը: Խորհրդային հանրապետությունների միությունը ամրապնդեց Խորհրդային Հայաստանի միջազգային գոյության հենարանները:

* **37.** ՂԱԶԱՐՅԱՆ, Լ. — Հիշողություններ Ղարսի դեպքերի և Ղուկաս Ղուկասյանի մասին: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1922. 10 մայիսի. № 101.

Մայիսյան ապստամբությունը Ղարսում: Ղ. Ղուկասյանը վորպես Ղարսի ապստամբության ակտիվ մասնակիցներից և ղեկավարներից մեկը, նրա կռիվները Մազրայում և Արգինայի մոտերը: Ղարսի ապստամբության պարտությունը:

**38.** ՂԱՄԱՐԼՎԻ և Զանգեզուրի կռիվները: Յե., Պետհրատ. 1922.

Ղամարլվի և Զանգեզուրի քաղաքացիական կռիվների մասին:

**39.** ՄԱՅԻՍՅԱՆ ապստամբությունը Հայաստանում: 1920 X 1930. (Հիշողությունների և դոկումենտների ժողովածու): Յե., Պետ. հրատ. 1930. VIII, (9—203) էջ:

Փաստաթղթեր, ապստամբության ղեկավարների և ականատեսների հուշեր, դեպքերի խրոնիկա, սպանվածների և բանտարկյալների ցուցակ, Մայիսյան ապստամբության մանրամասն նկարագրությունն ու լուսաբանումը ամբողջ Հայաստանում:

* **40.** ՄԱՅԻՍՅԱՆ ապստամբությունը: [Առաջնորդող]: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1928. 10 մայիսի, № 108.

**41.** ՄԱՆԴԱԼՅԱՆ, Թ. — Մայիսյան ապստամբությունը: Յե., Պետ. հրատ. 1929. 67 էջ:

Մայիսյան ապստամբության համառոտ պատմությունը, նրա ծագման, զարգացման և պարտության պատճառները:

* **42.** ՄԱՆԴԱԼՅԱՆ, Թ. — Ինչու պարտվեց Մայիսյան ապստամբությունը: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 1 մայիսի. № 100.

**43.** ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, Ա. — Հուշեր և փաստեր ընդհատակյա կյանքից: Յե., Կուսհրատ. 1933. 78 էջ:

* **44.** ՄԵԼԻՔՅԱՆ, Դ. — Ղարսի ապստամբությունը 1920 թ. մայիսին: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1928. 10 մայիսի. № 108. 11 մայիսի. № 109.

* **45.** Ընկ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ճառը Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարի 1-ին նիստում: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1922. № 26.

Ընկ. Մյասնիկյանը վերլուծում է Դաշնակցության թողած քանդված և քայքայված յերկրի վիճակը դաշնակցության տիրապետության օրոք, նրա արտաքին և ներքին քաղաքականությունը, վորպիսին յերկիրը հասցրեց ծայրահեղ չքավորության և ավերածության: Հայաստանի խորհրդայնացումը բանվորա-գյուղացիական մասսաներին ազատագրեց դաշնակցության բռնապետությունից և յերկրին տվեց խաղաղություն և բարեկամություն հարևանների հետ:

* **46.** ՄՈՐՈԽՍ — Հայաստանի Մայիսյան ապստամբությունը և հակահեղափոխությունը: «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1932. Գիրք 2-րդ, եջ՝ 194—223.

Դաշնակցական կառավարության ձեռնարկումները Մայիսյան ապստամբության նախօրյակին: Հակահեղափոխական մյուս բոլոր կուսակցությունների (սպեցիֆիկներ, հայ-ժող. կուս., ռամկավարներ, էս-էրներ և այլն) կոնսոլիդացիան Մայիսյան ապստամբության դեմ:

* **47.** ՄՈՐՈԽՍ — 1920 թվի մայիսմեկյան ցույցերը Յերևանում: «Խորհրդ. Հայաստ.» որթ. Յե. 1928. 10 մայիսի, № 108.

**48.** [ՄՈՐՈԽՍ] — Մայիսյան ապստամբության տասնամյակը: Յե., Պետհրատ. 1930. 25 եջ:

Մայիսյան ապստամբության տասնամյակի առթիվ տրված համառոտ թեզեր — մատերիալներ՝ դաշնակցական Հայաստանի տնտեսական դրության, արտաքին և ներքին քաղաքականության, Հայկոմկուսի գործունեյության և Մայիսյան ապստամբության մասին:

**49.** ՄՌԱՎՅԱՆ, Ա. — Յե՞րբ և ինչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշ.) կուսակցությունը: Յե., Պետհրատ. 1928. 20 եջ:

* **50.** ՄՌԱՎՅԱՆ, Վ. — 1920 թ. մայիսի 1-ը Ղարաքիլիսայում: «Խորհրդ. Հայաստ.» որթ. Յե. 1927. 1 մայիսի. № 99.

Մայիսյան ցույցերը Ղարաքիլիսայում:

* **51.** ՆԵՐՍԻՍՅԱՆ, Լ. — 1920 թ. մայիսը Նոր Բայազետում: «Խորհրդ. Հայաստ.» որթ. Յե. 1928. 10 մայիսի. № 108.

**52.** ՆԵՐՍԻՍՅԱՆ, Մ. — Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում: Յե., ՀԿ(բ)ԿԿ Կուսհրատ. 1935. 176, [2] եջ:

Բովանդակ.՝ — Ցարիզմի լծի տակ.— Փետրվարյան հեղափոխությունից հետո.— Հոկտեմբերը և դաշնակց. «պետականության» ծնունդը.— Իմպերիալիզմը և դաշնակցական Հայաստանը.— Անվերջ պատերազմներ և ջարդեր.— Բանվորական հարցը դաշնակցական Հայաստանում.— Դաշնակցության ագրարային-գյուղացիական քաղաքականությունը.— Դաշնակցության «պետականության» «գոհարները».— Տնտեսական անկումը դաշնակցական Հայաստանում.— Սով և մահ.— Հեղափոխական շարժումները Հայաստանում մինչև Մայիսյան ապստամբությունը.— Մայիսյան ապստամբությունը.— Հերոսական մայիսից դեպի հաղթական Նոյեմբերը.— Նոյեմբերյան հեղափոխությունը.— Պայքար նոյեմբերից հետո.— Հավելված՝ ա) Դոկումենտներ. բ) Խրոնիկա:



**53.** ՆՈՅԵՄԲԵՐԻ ճանապարհին: (Ժողովածու): Յե., Պետհրատ. 1928. 48 եջ:

Նոյեմբերյան հեղափոխության մասնակիցների հիշողությունների ժողովածու Հայաստանի խորհրդայնացման մասին:

**54.** ՁՈՒԲԱՐ, Յե. — Նոյեմբերի 29. (Հիշողություններ): Յե., Պետհրատ. 1925. 28 եջ:

Հիշողություններ Հայաստանի խորհրդայնացման առաջին օրերից: Խորհրդայնացման առաջին օրերը Ղազախում:

**55.** ՁՈՒԲԱՐ, Յե. — Սկզբում: Հուշեր: Յե., Պետ. հրատ. 1926. 48 եջ:

Եպիզոդ «Սպարտակ» բանվորագյուղացիական յերիտասարդական կազմակերպության հեղափոխական գործունեյությունից դաշնակցական Հայաստանում:

* **56.** ՊԱՊԻԿ — Հայաստանի հեղափոխական շարժման հերոսական շրջանը: «Խորհրդ. Հայաստ.» որթ. Յե. 1928. № 108.

Մայիսյան ապստամբությունների մասին:

* **57.** ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Հաղթական նոյեմբերի ուղին: «Խորհրդ. Հայաստ.» որթ. Յե. 1935. 22 ապրիլի. № 93.

**58.** ՊԱՐՍԱՄՅԱՆ, Վ. — Նոյեմբերյան հեղափոխությունը Հա-

յաստանում։ (1920 թ. նոյեմբերի 29)։ Յե., Պետհրատ. 1932. 140 էջ։

Հայաստանի տնտեսական դրությունը դաշնակների օրոք. բանվորների, գյուղացիների և ծառայողների տնտեսական-իրավական վիճակը։ Կոմունիստական աշխատանքը Հայաստանում, Մայիսյան ապստամբությունը և Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանի աշխատավորության փրկության միակ ելք։ Հավելված՝ Դեպքերի համառոտ խրոնիկա։

* **59.** ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. — Մայիսի դեպքերը Լենինականում։ (Հիշողություն)։ «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1928. 10 մայիսի, № 108.

* **60.** ՍԵՄՈՒՐԴԵՆ — Առաջին կոմունիստական թերթը դաշնակցական Հայաստանում։ «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1922. 11 հունիսի. № 128.

* **61.** ՍՈՒՐԵՆՅԱՆ, Ս. — Պատմական մայիսն Ալեքպոլում։ «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1935. 18 ապրիլի. № 90.

Հիշողություններ Մայիսյան ապստամբությունից։

**62.** ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՌՆԻԿ — Քաղաքացիական պատերազմը Հայաստանում։ Յե., Պետհրատ. 1931. 36 էջ։

Համառոտ ակնարկ Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների։ Քաղաքացիական կռիվների ետապները փետրվարյան ավանտյուրայից մինչև դաշնակցական բանդաների լիկվիդացիան։

* **63.** ՎՇՏՈՒՆԻ, ԱԶԱՏ — Զրահավոր մայիս։ (Նախերգանք)։ «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1932. Գիրք 2-րդ, էջ՝ 84—87.

Նույնը — «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1932. 29 նոյեմբ. № 278.

Հատված Մայիսյան ապստամբության նվիրված պոեմի նախերգանքից։

* **64.** ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ, Դր. — Անլեգալ աշխատանքը և կոմունիստական գրականությունը դաշնակցականների օրոք։ «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1922. 11 հունիսի. № 128.



27544-60

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ։

**65.** ԱԼԱԶԱՆ և ՆՈՐԵՆՑ, Վ. — Տասներկու տարի։ Խորհրդային Հայաստանի խրոնիկան։ Կազմեցին՝ Ալազան և Վ. Նորենց։ Յե., Պետ. հրատ. 1933. 198 էջ.

Նոյեմբերյան հեղափոխության խրոնիկան առաջին օրից և սոցիալիստական շինարարության 12 տարվա ցայտուն իրողությունների արձանագրությունը ժամանակագրական կարգով։

ԱԲԵԼՅԱՆ, Գ. — Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում. — Տես՝ № 2.

* **66.** ԳԱԼՈՅԱՆ, Ա. — Տասը տարի խորհրդայնացման ուղիով։ «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 29 նոյեմբ. № 273.

Հայաստանի ձեռք բերած տասը տարվա նվաճումները յերկրի ինդուստրացման ասպարեզում։ Համեմատական տվյալներ արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի զարգացման մասին։

**67.** ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և գիտական-հետազոտական աշխատանքը Խորհրդային Հայաստանում։ 1920—1930. Յե., [ՀՍԽՀ. Լուս. Ժող. Կոմ.]. 1931. 139, [1] էջ։

Խորհրդ. Հայաստանի տասը տարվա ձեռք բերած նվաճումները գիտության և գիտահետազոտական աշխատանքների ասպարեզում։

Բովանդակ.՝ — Հակ. Հովհաննիսյան. Գիտահետազոտական աշխատանքները ՀՍԽՀ Պետհամալսարանում.— Գ. Ղալանթարյան. Գիտահետազոտական աշխատանքները Հայաստանի գյուղատնտեսության քիմիացման ասպարեզում.— Պրոֆ. Մ. Թումանյան. Պետհամալսարանի մասնավոր յերկրագործական ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներից.—Խ. Տրապիզոնցյան. Կենտ-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ- рм.ССР им. А. Мясникян

րոնական միացյալ լաբորատորիա.— Մ. Ֆորստեճատով. Սևանի լճափնյանի աշխատանքները 1923—30 թ. և Սևանի լճի նշանակությունը ժողովրդական տնտեսության տեսակետից.— Ա. Հովհաննիսյան. Լժկ-ի կենտրոնական հողեմանկարանական կաբինետի խնդիրների և գործունեյության մասին.— ❊❊❊ Գիտության և արվեստի ինստիտուտ.— Բժ. Ալեքսանյան. Գիտահետազոտական գործն առողջապահության մարզում Խորհրդային Հայաստանում.— Աշխարհբեկ Քալանթար. Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե.— Ռ. Դրամբյան. Հայաստանի պետական թանգարանը.— Ս. Սուրենյան. ՀՍԽՀ հեղափոխության թանգարանը.— Ա. Անտոնյան. Կենտրոնական մանկավարժական դավառագիտական թանգարան.— Սեն. Տեր-Հակոբյան. Էջմիածնի պետական թանգարան.— Մ. Գևորգյան. Պետ. հանրային գրադարան Մյասնիկյանի անվան.— Ա. Թումանյան. Պետական Գրապալատ:

**68.** ԽԱՆՋՅԱՆ, Ա. — Խորհրդային Հայաստանը սոցիալիզմի կառուցման ուղիներով: [Ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում]: Յե., Կուսհրատ. 1934. 121 էջ:

Նույնը — [2-րդ հրտ.]. 1934. 174 էջ:

Մեր տնտեսության վերելքը, բանվորների, կոլտնտեսականների ակտիվությունն ու անձնվիրությունը սոցիալիստ. շինարարության ասպարեզում: Գյուղի սոցիալիստական վերակառուցման, ազգային քաղաքականության, կուլտուրական շինարարության և այլ խնդիրների ընդհանուր վերլուծումը և հանրագումարները:

* **69.** ԽԱՆՋՅԱՆ, Ա. — Նոյեմբերյան հաղթանակի 13-րդ տարեդարձին: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1933. 29 նոյեմբ. № 275.

Ընկ. Ա. Խանջյանի արտասանած ճառը Հայաստ. խորհրդայնացման 13-րդ տարեդարձի առթիվ կայացած հանդիսավոր նիստում, վորտեղ հանրագումարի յե բերվում 13 տարվա ընթացքում Խորհրդ. Հայաստանի ձեռք բերած մեծ նվաճումները արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի և այլ բնագավառներում:

* **70.** ԽԱՆՋՅԱՆ, Ա. — Պայքարի և սոցիալիստական շինարարության տասնամյակը: «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1930. № 11—12. էջ՝ 99—106.



Նույնը — «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 29 նոյեմբ. № 279.

Խորհրդայնացման 10-ամյակի առթիվ: Հայաստանի վիճակը խորհրդայնացման նախօրյակին: Նոյեմբերի 29-ը, վորպես Հայաստանի բանվորագյուղացիական մասսաների դասակարգային տապալման օր, տասնամյակի նվաճումների հանրագումարները մեր արդյունաբերության, կուլտուրայի, շինարարության և այլ բնագավառներում:

**71.** ԽԱՋԻԿՈՂԼՅԱՆ, Վ. — ՀՍԽՀ Աշխժողկոմատը խորհրդայնացման առաջին տասնամյակին: Յե., Պետ. հրտ. 1930. 68 էջ:

Բրոշյուրը բովանդակում է ՀՍԽՀ Աշխժողկոմատի տասնամյա գործունեյությունը:

**72.** ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Հայաստան: 1920 հինգ տարի 1925. [Ժողովածու]: Յե., ՀՍԽՀ Կենտգործկոմ և Ժողկոմխորհ. 1926. 472 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Խորհրդ. Հայաստանի հինգ տարվա նվաճումների ամփոփումը:

**73.** ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Հայաստանը թվերով: Վիճակագրական տեղեկատու: 1923—1927. [Յե.], ՀՍԽՀ. Կենտր. վիճակ. վարչություն. 1928. XI, 402, 6 էջ:

Բովանդակ.՝ Հառաջաբան.— Աղյուսակային նյութի համառոտ տեսություն.— Աղյուսակներ. I. Տարածություն ու բնակչություն.— II. Ժողովրդ. լուսավորություն.— III. Ժողովրդ. առողջապահություն.— IV. Արդարադատություն.— V. Գյուղատնտեսություն.— VI. Բնակչության սնունդը.— VII. Արդյունաբերություն.— VIII. Աշխատանք.— IX. Առևտուր.— X. Կոոպերացիա.— XI. Ֆինանսներ ու վարկ.— XII. Տրանսպորտ.— XIII. Ժողովրդ. կապ.— XIV. Կոմունալ տնտեսություն.— Աղյուսակների ծանոթությունները.— Հավելված.— Լրացուցիչ աղյուսակներ:

* **74.** ԿԱՍՅԱՆ, Ս. — Բաց նամակ գաղութահայ աշխատավոր զանգվածներին: «Խորհրդ. Հայաստ.» օրթ. Յե. 1930. 11 նոյեմբ. № 263, 12 նոյեմբ. № 264.

ԿՈՐԿՈՏՅԱՆ, Զ. — Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարությունը: — Տես՝ № 10.

**75.** ՀԿ(Բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն: Յե., Կուսհրատ. 1935. 475 եջ:

Համագումարի նիստի բացումը և վողջույններ, ընկ. Խանջյանի հաշվետու զեկուցումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի գործունեյության մասին: Պատգամավորների ելույթները և վիճաբանություններ: Ընկ. Գուլոյանի զեկուցումը ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ի աշխատանքների մասին: Ընկ. Ղեվոնդյանի զեկուցումը: Բանաձևեր և այլն:

**76.** Հ. Ս. Խ. Հ. կառավարության հաշվետվության նյութեր: (1929—1934 թ. թ.): Խորհուրդների VIII համագումարի առթիվ: Յե., ՀՍԽՀ Ժողկոմխորհ. 1935. 175, [12] եջ:

Բ ո վ ա ն դ ա կ.՝ I. Ներածություն.— II. Արդյունաբերություն.— III. Գյուղատնտեսություն.— IV. Ջրատնտեսություն.— V. Տրանսպորտ.— VI. Կապի տնտեսություն.— VII. Ապրանքաշրջանառություն.—VIII. Աշխատանք.—IX. Կուլտուրա.— X. Առողջապահություն.— XI. Կոմունալ և բնակարանային շինարարություն.—XII. Ֆինանսներ և կապիտալ ներդրումներ.—XIII. Աղյուսակներ:

**77.** ՀԱՅԱՍՏԱՆԻ արդյունաբերությունը 5 տարում: Յե., Պետ. հրատ. 1929. 24 եջ: (Քաղլուսգլխվար: Քաղ. մասս. գրականություն № 4—):

Հայաստանի արդյունաբերության աճը առաջին հնգամյակում: Հիմնական ներդրումներ յերկրաբանական-հետազոտական աշխատանքների, ելեկտրոֆիկացիայի, հումքի բազայի և այլ գծով: Վիճակագրական տվյալներ բովանդակ արտադրանքի և բանվորական ուժի մասին: Մեր արդյունաբերության աճը անցյալի համեմատությամբ:

**78.** [ՀԱՅԱՍՏԱՆԻ] բամբակագործությունը 5 տարում: Յե., Պետ. հրատ. 1929. 16 եջ. (Քաղլուսգլխվար. Քաղ. մասս. գրականություն № 1—):

**79.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ելեկտրոֆիկացիան 5 տարում: Յե., Պետ. հրատ. 1929. 16 եջ: (Քաղլուսգլխվար. Քաղ. մասս. գրականություն № 2—):

Հայաստանի ելեկտրոֆիկացման առաջին հնգամյա պլանը: Տեղեկություններ մինչև խորհրդայնացումը Հայաստանի տերիտորիայի վրա յեղած մի քանի մանր ելեկտրոկայանների մասին:

**80.** ՀԱՅԱՍՏԱՆԻ քիմիական արդյունաբերությունը 5 տարում: Յե., Պետ. հրատ. 1929. 12 եջ: (Քաղլուսգլխվար. Քաղ. մասս. գրականություն № 5—):

Հայաստանի ձեռք բերած նվաճումները քիմիական արդյունաբերության բնագավառում և քիմիական արդյունաբ. զարգացման հեռանկարները ըստ առաջին հնգամյա պլանի:

**81.** ՀՈԿՏԵՄԲԵՐ–ՆՈՅԵՄԲԵՐ: Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության: Խմբգր.՝ Յե. Չարենց, Ա. Բակունց, Յե. Չուբար: Յե., Պետ. հրատ. 1932. 658 եջ:

Բ ո վ ա ն դ ա կ.՝ 1. Մեր գրողները. 2. Գրական ժառանգություն և արվեստ. 4. Ժողովրդական լուսավորություն և գիտություն. 5. Ժողովրդական տնտեսություն. 6. Խրոնիկա (տասներկու տարի Խորհրդային Հայաստանի խրոնիկան):

**82.** ՀՈՎՍԵՓՅԱՆ, Խ. — Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը: 1927/28—1932/33 թ. թ. Արդյունաբերություն և ելեկտրոֆիկացիա: Յե., Պետ. հրատ. 1929. 45, [1] եջ:

* **83.** ՀՈՎՍԵՓՅԱՆ, Խ. — Հաղթական տասնամյակը: «Նոր Ուղի» ամսագր. Յե. 1930. № 11—12. եջ՝ 112—127.

Գրված է Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առթիվ: Հոդվածը բովանդակում է տասնամյակի ընթացքում ձեռք բերված հաջողությունները արդյունաբերության, գյուղատնտեսության սոց. վերակառուցման, սոց. կուլտ շինարարության, տրանսպորտի բնագավառում: Կապիտալ ներդրումները Հայաստանի ժողտնտեսության մեջ:

**84.** *ՀՈՎՍԵՓՅԱՆ, Խ. — Պայքարի և շինարարության տասը տարին:* Եր., Պետ. հրատ. 1930. 48 էջ:

*Նշելով դաշնակցական Հայաստանի արդյունաբերության խղճուկ և քայքայված վիճակը, ցույց է տրվում այն հսկա ներդրումները, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը դրել է արդյունաբերության, գյուղատնտեսության և սոցիալիստական շինարարության այլ բնագավառներում: Տասնամյակի արդյունքները:*

**85.** *ՄԻՐԶՈՅԱՆ, Լ. — Խորհրդային Հայաստանի պիոներական շարժման տասնամյակը:* Եր., Պետ. հրատ. 1931. 31 էջ:

*Ընկ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ճառը Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարի 1-ին նիստում: — Տես՝* № 45.

**86.** *ԵՐԵՎԱՆԻ քաղաքային խորհրդի 1931—34 թ. թ. հաշվետվությունը:* Եր., Երքաղխորհրդի կազմ-բաժին. 1934. 123 էջ:

*Երևան քաղաքի ձեռք բերած նվաճումները քաղաքային տնտեսության, կոմունալ շինարարության, ժողովրդական լուսավորության, առողջապահության և այլ բնագավառներում:*

**87.** *ՇԱՔԱՐՅԱՆ, Գ. — Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության 5-ամյա պլանը: Շինարարություն:* Եր., Պետ. հրատ. 1929. 48 էջ:

*Համաձայն Պետպլանի տվյալների շինարարության մեջ ներդրված գումարների աճումը: Այդ ներդրումների պատկերը բնակարանային և կոմունալ շինարարության գծով:*

**88.** *ՍԻՄՈՆՅԱՆ, Դր. — Հայաստանի գրականությունը: (Խորհրդ. Հայաստանի գրողների միության նախ. Դր. Սիմոնյանի զեկուցումը Խորհրդ. գրողների համամիութենական 1-ին համագումարում):* Եր., Պետ. հրատ. 1934. 80 էջ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | Էջ |
|---|---|
| Առաջաբան . . . . . . . . . . . . . . . . . . . | 3 |
| 1. Հայաստանը դաշնակցական տիրապետության օրոք . . | 5 |
| 2. Հեղափոխական շարժումները Հայաստանում. Մայիսյան ապստամբություն. Նոյեմբերյան հեղափոխություն . . | 9 |
| 3. Խորհրդային Հայաստանի նվաճումների հանրագումարները | 17 |

ՀՀ Ազգային գրադարան
NL0126244

Գինը՝ 50 կոպ.